Թույլտվությունը տրված է

Կենտրոնացում Մեղքը մեր կյանքում դուռ է բացում հակառակորդի համար: Աստված թույլ է տալիս այդ կապանքները, որպեսզի մենք Իրեն աղաղակենք և վերադառնանք Իր մոտ:

Ուսումնասիրություն Բանալի համարներ՝ Ղուկ. 22.31-32, Հոբ 1.6-12, Գ Թագ. 22.7-8,15-19:

Հպարտությունն ամենատարածված ձևն է, որով հավատացյալները դուռ են բացում, որպեսզի մեր հակառակորդը՝ սատանան, մեզ գերեվարի:

- *Հպարտությունը սեփական ուժերի վրա վստահելն է:*
  Հիսուսի աշակերտ Պետրոսը պնդեց, որ Հիսուսին երբեք չէր ուրանա, հանդիմանեց Հիսուսին և մարդու ականջ կտրեց. այս բոլորն այն պատճառով, որ վստահում էր սեփական ուժերին: Աստված թույլ տվեց, որ սատանան «մաղի» Պետրոսին, որպեսզի հպարտությունը չկործանի նրան: (Մարկ. 14.27-31, Մաթ. 16.21-23, Ա Կորն. 10.12):
- *Հպարտությունը՝ սեփական արդարությանը վստահելն է:*
  Աստված թույլ տվեց, որ սատանան գրոհի Հոբի դեմ, որովհետև Հոբն ինքն իր աչքին արդար էր թվում: Հոբի նման, հասուն հավատացյալները խոցելի են դառնում այս թակարդի համար, երբ սկսում ենք մեր արդարությունը չափել մեր արածներով, ոչ թե Քրիստոսի զոհով՝ խաչի վրա: (Հոբ 1.6–12, 32.1–2, 33.8–9, 36.3, Հոբ 38):
- *Հպարտությունը սեփական իմաստությանը վստահելն է:*
  Աքաբ թագավորը չէր ուզում հնազանդվել Աստծուն, և այդ պատճառով նա լսում էր միայն այն մարգարեներին, ովքեր ասում էին նրան այն, ինչ ինքն էր ուզում լսել: Նույնիսկ երբ մի հավատարիմ մարգարե փորձեց զգուշացնել նրան, Աքաբը հրաժարվեց լսել: Վերջիվերջո, նա կործանվեց:
  (Դ Թագ. 21.1–6, Գ Թագ. 22.20–23, Հակ. 3.14–15)

Քննարկում

1. Աստվածաշնչյան այս պատմություններից ո՞րն է ավելի շատ խոսում քո սրտի հետ՝ Պետրոսի, Հոբի կամ Աքաբի: Ինչո՞ւ:

2. Ինձ ձևով մենք կարող ենք հույսներս դնել մեր սեփական ուժերի վրա՝ ինքներս էլ դա չգիտակցելով: Ինչքանո՞վ է մեր մշակույթը մեզ քաջալերում՝ վստահել սեփական ուժերին:

3. Հոբի պատմությունից ինչ-որ նոր բան սովորեցի՞ր: Թող ինչ-որ մեկը խմբում բարձրաձայն կարդա Հոբի 38-րդ գլուխը:

4. Դու երբևէ, Աքաբի նման, գայթակղություն ունեցե՞լ ես՝ մերժելու իմաստուն խորհուրդը, քանի որ չես ցանկացել այն լսել: Պատմիր այս պատմությունը խմբում:

5. Աստված վերահսկում է ամեն բանի վրա և Նա կօգտագործի հակառակորդին՝ Իր նպատակներն իրագործելու համար, ինչպես վարվեց Պետրոսի, Հոբի և Աքաբի դեպքում: Ինչո՞ւ է դժվար հիշել, որ Աստված ամեն բան վերահսկում է, երբ հայտնվում ենք ճակատամարտի կենտրոնում:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Մենք սատանայի համար դուռ ենք բացում, երբ ընկնում ենք հպարտության մեջ:
- Հպարտությունը սեփական ուժերին, իմաստությանն ու արդարությանը վստահելն է:
- Երբ մենք հպարտ ենք, Աստված թույլ է տալիս, որ սատանան մեզ դնի կապանքի մեջ, որպեսզի մենք ապաշխարենք և վերադառնանք Աստծուն: Նա այդպես է վարվում, քանի որ սիրում է մեզ և չի ցանկանում, որ հպարտությունը կործանի մեզ:

Աղոթիր

Աղոթիր խմբի կարիքների համար: